ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N << ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ՇՀԾՁԲ-17/6/4-2>>

ք. Երևան

<< 11 >> ապրիլի 2017թ.

<< ՀՀ ԿԱ ԱԳ կադաստրի պետական կոմիտեն>>, ի դեմս աշխատակազմի ղեկավար Վ.Հասրաթյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԲԵՍԹ ՍՈՖԹ>> ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ.Մարգարյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 3050000 (երեք միլիոն հիսուն հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12.2017թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում պայմանագիր կնքելու պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե	«ԲԵՍԹ ՍՈՖԹ» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7	Հասցեն՝ ք.Երևան, Չարենցի 1
h/h 900013220026	Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	h/h 1570004845660100
ՀՎՀՀ 02534328	ՀՎՀՀ 01568139
Աշխատակազմի ղեկավար՝	
Ա. Հակոբյան	Տնօրեն՝ Հ.Մարգարյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Չափաբաժին 2
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1.1. Սույն բնութագրով սահմանվում են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից շահագործվող անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների սահմանափակումների կիրառման և սահմանափակումների առկայության վերահսկման էլեկտրոնային համակարգում /այսուհետև՝ Էլեկտրոնային համակարգ/ ԴԱՀԿ ծառայությունից մուտքագրվող էլեկտրոնային հաղորդագրությունների հիման վրա սահմանափակումների ավտոմատացված կիրառման գործիքակազմում փոփոխությունների և լրացումների տեխնիկական պահանջները:

1.2. Էլեկտրոնային համակարգում ծրագրային փոփոխություններն ու լրացումները պետք է նախագծվեն՝ հաշվի առնելով այդ համակարգի ճարտարապետությունը և աշխատանքի սկզբունքները:

1.3. Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքները պետք է Պատվիրատուին տրամադրվեն որպես «Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ» էլեկտրոնային համակարգի ծրագրային ապահովման ընդլայնումներ /extensions/:

1.4. Պատվիրատուն ծրագրային փոփոխությունների մշակման աշխատանքները իրականացնողին կտրամադրի մշակման համար անհրաժեշտ ելակետային նյութերը /source code/ և տեխնիկական փաստաթղթերը:

2. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Անհրաժեշտ է, որ բոլոր գրությունները, որտեղ «արգելադրել/ազատել ամբողջ գույքը» անվանումով վանդակը նշված է «այո», /թե՛ ԴԱՀԿ ծառայության կողմից էլեկտրոնային եղանակով ուղարկված, թե՛ համակարգում «ավելացնել» գործիքով մուտքագրված/ անկախ այն հանգամանքից, թե համակարգը հայտնաբերել է տվյալ գրությանն առնչվող կադաստրային գործ, թե ոչ, հերթականության սկզբունքով բաշխվի յուրաքանչյուր մարզի համապատասխան պաշտոնին կցված մեկական համապատասխան օգտատիրոջ /որոնք ունեն «ԴԱՀԿ աշխատակիցներ» permission/ միջև և գրության պատասխանը ԴԱՀԿ ծառայություն ուղարկվի միայն բոլոր մարզերի համապատասխան բոլոր օգտատերերի կողմից «ուղարկել ԴԱՀԿ» կոճակը սեղմելուց հետո, իսկ «ավելացնել» գործիքով մուտքագրված գրությունների դեպքում «պատրաստել պատասխան» կոճակը ակտիվանա միայն բոլոր մարզերի համապատասխան բոլոր օգտատերերի կողմից «գեներացնել պատասխան» կոճակը սեղմելուց հետո: Ընդ որում յուրաքանչյուր կատարողի մոտ «ուղարկել ԴԱՀԿ» կոճակը սեղմելուց հետո տվյալ գրությունը այլևս տվյալ կատարողի մոտ «ընթացիկ» կարգավիճակ չունենա: Մինչև վերջին կատարողի կողմից տվյալ գրության նկատմամբ «ուղարկել ԴԱՀԿ» կոճակը սեղմելը անհրաժեշտ է, որ «ԴԱՀԿ դիտել» իրավունք ունեցող օգտատերը տեսնի, թե կատարողներից որ մեկն է տվյալ գրությունը ուղարկել ԴԱՀԿ, իսկ որը ոչ:

Իսկ «ավելացնել» գործիքով մուտքագրված գրությունների դեպքում, որը բաշխվել է բոլոր մարզերից մեկական կատարողի վրա, անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր կատարող պատասխան գեներացնելուց հետո, չունենա հնարավորություն նույն պատասխանը նորից գեներացնելու, իսկ տվյալ գրությունը անհրաժեշտ է, որ իր մոտ չունենա ընթացիկ կարգավիճակ: «ԴԱՀԿ դիտել» իրավունք ունեցող օգտատերը տեսնի, թե կատարողներից որ մեկն է տվյալ գրության պատասխան գեներացրել, իսկ որը ոչ:

2.2. Անհրաժեշտ է, որ այն գրությունները, որտեղ «արգելադրել/ազատել ամբողջ գույքը» անվանումով վանդակը նշված է ոչ, թե՛ ԴԱՀԿ ծառայության կողմից էլեկտրոնային եղանակով ուղարկված, թե՛ համակարգում «ավելացնել» գործիքով մուտքագրված/, համակարգը տվյալ գրությունը բաշխի միայն այն ստորաբաժանման համապատասխան օգտատիրոջը, որին կցված ստորաբաժանումը սպասարկում է տվյալ գրության համայնք դաշտում նշված մարզը և գրության պատասխանը ԴԱՀԿ ծառայություն ուղարկվի միայն տվյալ օգտատիրոջ կողմից «ուղարկել ԴԱՀԿ» կոճակը սեղմելուց հետո:

2.3. Անհրաժեշտ է, որ թե՛ ԴԱՀԿ ծառայության կողմից էլեկտրոնային եղանակով ուղարկված, թե՛ համակարգում «ավելացնել» գործիքով մուտքագրված գրությունները «ԴԱՀԿ ուղարկված» կարգավիճակ ստանալուց հետո ավտոմատ PDF ֆորմատով կցվեն այն կադաստրային միավորների փաստաթղթերին, որոնց սահմանափակումներ դաշտում տվյալ գրությունը ավելացվել է «հաստատված» կամ «անփոփոխ» կարգավիճակով:

2.4. Անհրաժեշտ է, որ «ԴԱՀԿ աշխատակիցներ ՏՏԿ» և «ԴԱՀԿ աշխատակիցներ» իրավունքներ ունեցող օգտատերերին «բացակա» կամ «ազատված» կարգավիճակ նշելու դեպքում նրանց վրա բաշխված գրությունները ավտոմատ կերպով բաշխվեն համակարգի մյուս համապատասխան օգտատերերի միջև: Իսկ զբաղված նշելու դեպքում նոր գրություն չբաշխվի տվյալ օգտատիրոջ վրա:

2.5. Անհրաժեշտ է «Զրոյացնել» կոճակի համար ստեղծել առանձին իրավունք:

2.6. Անհրաժեշտ է, որ որոնման հնարավորություն լինի պարտապանի անվանում, անձնագիր/ՀՎՀՀ, սոցքարտ, ծննդյան օր, պետռեգիստրի վկայական, պետռեգիստրի գրանցման համար, որոշման համար, որոշում կայացնողի, վարույթի համար դաշտերում մուտքագրված տվյալներով: Անհրաժեշտ է նաև ստեղծել հնարավորություն որոնման արդյունքները xls ֆորմատով արտահանելու համար:

2.7. Անհրաժեշտ է «ԴԱՀԿ գրություններ» բաժնում ստեղծել գրությունների որոնման հնարավորություն հետևյալ պարամետրերով՝ պարտապանի անվանում, անձնագիր/ՀՎՀՀ, սոցքարտ, ծննդյան օր, պետռեգիստրի վկայական, պետռեգիստրի գրանցման համար, որոշման համար, որոշում կայացնողի, վարույթի համար դաշտերում մուտքագրված տվյալներով: Անհրաժեշտ է նաև ստեղծել հնարավորություն որոնման արդյունքները xls ֆորմատով արտահանելու համար:

2.8. Անհրաժեշտ է «ԴԱՀԿ գրություններ» բաժնում գրությունների որոշման ամսաթվի սյունակի կողքը ավելացնել նոր սյունակ, որտեղ կարտացոլվի գրությունների կատարման ժամկետի օրեր: Յուրաքանչյուր գրության ժամկետը 7 օր է /հաշվի է առնվում նաև ոչ աշխատանքային օրերը/, ընդ որում նոր գրություն ավելացնելու դեպքում, ինչպես նաև այն գրությունները, որոնց համար ի լրումն պատասխան պետք է ուղարկվի ԴԱՀԿ ծառայություն և «Ուղարկված ԴԱՀԿ» կարգավիճակից փոփոխվում են «Ընթացիկ» կարգավիճակի ևս կատարման ժամկետ նշվի:

2.9. Անհրաժեշտ է, որ կադաստր տեքստային բաժնի իրավունքներ և սուբյեկտներ դաշտում գործող «սեփականություն», «ընդհանուր համատեղ սեփականություն», «ընդհանուր բաժնային սեփականություն» տեսակի իրավունքներին կցված սուբյեկտների նկատմամբ խմբագրում կատարելիս համակարգը ստուգի խմբագրված սուբյեկտի տվյալներով առկա գործող կալանքների առկայությունը և առկայության դեպքում (եթե նախկինում տվյալ կալանքը չի կցվել տվյալ կադաստրային գործին) բերի համապատասխան հաղորդագրություն, որից հետո տվյալ կալանքի գրությունը նորից վերաբաշխվի «ԴԱՀԿ աշխատակիցներ» permission ունեցող այն օգտատիրոջ վրա, որին կցված ստորաբաժանման սպասարկման մարզում է գտնվում նշյալ խմբագրված կադաստրային գործի հասցեն: Ընդ որում, նման բաշխման արդյունքում դիտել կապված անշարժ գույքի միավորները դաշտում անհրաժեշտ է, որ բերի միայն տվյալ հասցեն:

2.10. Անհրաժեշտ է, որ կադաստր տեքստային բաժնի իրավունքներ և սուբյեկտներ դաշտում գործող «սեփականություն», «ընդհանուր համատեղ սեփականություն», «ընդհանուր բաժնային սեփականություն» տեսակի իրավունքներին կցված սուբյեկտների նկատմամբ խմբագրում կատարելիս, եթե մինչ խմբագրումը տվյալ սուբյեկտի տվյալներով գործող կալանք առկա է եղել ու խմբագրման արդյունքում կալանք չկա, ապա համակարգը բերում է համապատասխան գրություն, որից հետո տվյալ գրությունը, նորից վերաբաշխվում է «ԴԱՀԿ աշխատակիցներ» permission ունեցող այն օգտատիրոջ վրա, որին կցված ստորաբաժանման սպասարկման մարզում է գտնվում նշյալ խմբագրված կադաստրային գործի հասցեն: Ընդ որում նման բաշխման արդյունքում դիտել կապված անշարժ գույքի միավորները դաշտում անհրաժեշտ է, որ բերի միայն տվյալ հասցեն, որտեղ սահմանափակումներ դաշտում «չեղարկել» և հետո «ուղարկել ԴԱՀԿ» կոճակը

սեղմելուց ԴԱՀԿ ծառայություն ուղարկվի նախկինում տվյալ գույքի նկատմամբ սխալմամբ կալանք կիրառելու վերաբերյալ համապատասխան գրառում:

2.11. Անհրաժեշտ է, որ սեփականություն», «ընդհանուր համատեղ սեփականություն», «ընդհանուր բաժնային սեփականություն» տեսակի իրավունքի նկատմամբ գրանցում կատարելիս համակարգը ստուգի բոլոր գործող կալանքներին համապատասխանությունը, և գործող կալանք հայտնաբերելու դեպքում բերի համապատասխան հաղորդագրություն, որից հետ առանց լրացուցիչ բաշխում կատարելու գրանցում կատարող օգտատերը «ուղարկել ԴԱՀԿ» կոճակը սեղմելուց հետո տվյալ գույքի նկատմամբ կալանք կիրառելու վերաբերյալ ի լրումն գրություն գնա ԴԱՀԿ:

2.12. Անհրաժեշտ է, որ «ուղարկել ԴԱՀԿ» կոճակը սեղմելուց հետո, ԴԱՀԿ ծառայություն ուղարկվի տվյալ գրությանը կապակցված անշարժ գույքի միավորի հասցե, ինչպես նաև

2.12.1. եթե շենքեր բաժնում լրացված բոլոր շինությունների տեսակը նշված է այլ, ապա անհրաժեշտ է, որ ուղարկվի նաև հողամասի ծածկագիրը

2.12.2. եթե շենքեր բաժնում չկա լրացված որևէ շինություն, ապա ապա անհրաժեշտ է, որ ուղարկվի հողամասի ծածկագիրը և հողամասի նպատակային նշանակությունը

2.13. Անհրաժեշտ է, որ «ավելացնել կապված միավոր» և «հեռացնել կապված միավոր» կոճակները ակտիվ լինեն նաև ԴԱՀԿ ծառայության կողմից ուղարկված գրությունների ժամանակ:

2.14. Անհրաժեշտ է, որ գրության տեսակների մեջ ավելանա «Հարցում» անվանումով գրություն, որը հանդիսանում է ԴԱՀԿ-ից եկած Ե15 տեսակի հաղորդագրությունը, որոնց պատասխանելու համար անհրաժեշտ է ստեղծել հնարավորություն, ըստ որի հնարավոր կլինի ավելացնել տեքստ, ինչպես նաև ներբեռնել ֆայլ, որոնք կուղարկվեն ԴԱՀԿ ծառայություն: Ընդ որում նման տեսակի գրությունները անհրաժեշտ է, որ բաշխվեն «ԴԱՀԿ աշխատակիցներ SSԿ» իրավունք ունեցող օգտատերերի միջև:

2.15. Եթե կադաստրային գործին կցված է ընթացիկ դիմում, որի ժամանակ գեներացվելու է միասնական տեղեկանք կամ կատարվելու է իրավունքի գրանցում և սահմանափակումներ դաշտում առկա է կալանքի գրառում, որը «հաստատված», «անփոփոխ» կամ «չեղարկված» չէ (այսինքն առկա է կալանքի գրություն ընթացիկ և կապակցված միավորները դիտված չեն), ընդ որում, տվյալ գրությունը բաշխված է այլ օգտատիրոջ մոտ, անհրաժեշտ է, որ դիմումի կատարողը հնարավորություն ունենա սահմանափակումներ դաշտից տվյալ կալանքը նշի «հաստատված», «անփոփոխ» կամ «չեղարկված»: Այնուհետև տվյալ կալանքը դեռևս հանդիսանալու է ընթացիկ, մինչև տվյալ գրության կատարող օգտատիրոջ կողմից «ուղարկել ԴԱՀԿ» կոճակի սեղմումը:

2.16. Անհրաժեշտ է ստեղծել հնարավորություն, որով յուրաքանչյուր կալանքի կիրառման գրությանը ի պատասխան տրված գրության բովանդակությունը հնարվոր լինի տեսնել:

2.17. Անհրաժեշտ է, որ ԴԱՀԿ ուղարկված ստատուս ունեցող գրություններին կապակցված միավորների վրա նշելիս, հեռացնել կապված միավորը սեղմելիս, չթողնի հեռացնել տվյալ միավորը:

2.18. Անհրաժեշտ է, որ կադաստր տեքստայինում սահմանափակումներ դաշտում առկա հեռացնելու կոճակը, թույլ տա հեռացնել միայն ձեռքով մուտք արված արգելանքի տակ դնելու գրության հիման վրա կիրառված սահմանափակումը:

2.19. Անհրաժեշտ է, որ թե «ավելացնել» գործիքով մուտքագրված, թե ԴԱՀԿ ծառայության կողմից էլեկտրոնային եղանակով ուղարկված գրությունների դեպքում, նախ համակարգը, երբ ավտոմատ հայտնաբերում է գույքերը, դիտել կապված միավորների ցուցակում գույնով տարբերակի այն կադաստրային գործերը, որոնք միայն անուն ազգանուններն են համընկնել որոշման մեջ նշված անձանց հետ, իսկ հայրանուն դաշտը դատարկ է: Այնուհետև եթե տարբերակված գործերը չի դիտվում, այսինքն սահմանափակումներ դաշտում առկա կոճակներից ոչ մեկը չի նշում, համակարգը թողնի ուղարկել ԴԱՀԿ ծառայություն, որից հետո չդիտված միավորների սահմանափակումներ դաշտից ավտոմատ հեռացնի տվյալ կալանքի որոշումը: Սակայն մյուս կադաստրային գործերը, որոնք տարբերակված չեն, անհրաժեշտ է, որ պարտադիր դիտվեն, որից հետո համակարգը նոր թույլ տա ուղարկել ԴԱՀԿ ծառայություն:

2.20. Անհրաժեշտ է համակարգ մուտքագրել ԴԱՀԿ ծառայության կողմից մինչև ծրարգրի շահագործումը ուղարկված բոլոր կալանքի դնելու և կալանքը վերացնելու հին գրությունները իրենց պատասխաններով (թե՛ էլեկտրոնային եղանակով ուղարկված, թե՛ թղթային եղանակով կադաստր ներկայացված, շուրջ 2.000.000 հատ)՝ տալով «ԴԱՀԿ ուղարկված» կարգավիճակ, իսկ կալանքի համապատասխան որոշում լինելու դեպքում «արխիվացված» կարգավիճակ: Ընդ որում տվյալ գրությունները պետք չեն կապակցել կադաստրային

գործերի հետ: Ստեղծել «հին» գրությունների դիտման համար առանձին իրավունք, որը հնարավորություն է տալիս տեսնել բոլոր հին գրությունները:

2.21. «ԴԱՀԿ հասցեի որոնում» դաշտով որոնելիս, անհրաժեշտ է, որ համակարգը որոնի ոչ միայն գրության մեջ նշված հասցեով, այլ «հին» գրությունների պատասխանների տեքստերից:

2.22. ԴԱՀԿ-ից եկած Ե13 տեսակի գրությունները, որտեղ BASENUM դաշտում նշված է Ե12 հաղորդագրություն (թե՛ հին, թե՛ նոր) առանց կոտորակի (/), անհրաժեշտ է, որ համակարգը ավտոմատ թե՛ տվյալ Ե13, թե՛ տվյալ Ե12 գրությունը սարքի «արխիվացված» և տվյալ Ե12 գրությանը կապակցված միավորների սահմանափակում դաշտից հեռացնի տվյալ կալանքը (նույնը նաև «ավելացնել» գործիքով մուտքագրվածի դեպքում, եթե կատարվում է կալանքի արխիվացում), իսկ այն Ե13 տեսակի գրությունը, որտեղ BASENUM դաշտում նշված է Ե12/ (կոտորակով), անհրաժեշտ է որ Ե12 տեսակի գրության ստատուսի փոփոխություն չկատարվի, իսկ Ե13-ը մնա ընթացիկ ստատուսով: Իսկ հենց որ ԴԱՀԿ-ից ուղարկեն այն Ե13 գրությունը, որտեղ նշված է Ե12 առանց կոտորակի, ապա պետք արխիվացվի թե տվյալ Ե12 և Ե13, այլ նաև այն Ե13 գրությունները, որոնց BASENUM դաշտում նշված է նույն Ե12 գրությունը կոտորակով: ԴԱՀԿ-ից եկած Ե13 տեսակի և ձեռքով մուտք արված արգելանքից հանման գրությունները անհրաժեշտ չեն որ բաշխվեն: Ե12 տեսակի գրությունները անհրաժեշտ են, որ միայն վերոնշյալ լոգիկայով արխիվացվեն, իսկ եթե դեռևս արխիվացված չեն, մնան ընթացիկ ստատուսով: Ընդ որում Ե13 տեսակի գրությունները (թե՛ հին, թե՛ նոր) անհրաժեշտ են, որ կապակցվեն Ե12 (թե՛ հին, թե՛ նոր) տեսակի գրությունների հետ Ե13-ի BASENUM դաշտում գրված Ե12 գրությամբ, այսինքն Ե12 տեսակի գրության վրա լինի հատուկ կոճակ, որը սեղմելով բերի կապակցված Ե13 տեսակի գրությունը:

2.23. ԴԱՀԿ ծառայությունից էլեկտրոնային եղանակով ուղարկված եկած Ե13 տեսակի գրությունները, որտեղ BASENUM դաշտում նշված է Ե12/xxx հաղորդագրություն (թե՛ հին, թե՛ նոր) կոտորակով (/), անհրաժեշտ է, որ համակարգը ավտոմատ ԴԱՀԿ ուղարկված տվյալ Ե12/xxx գրությանը կցված կադաստրային գործի սահմանափակումներ դաշտից հեռացնի տվյալ Ե12 սափմանափակումը:

2.24. Անհրաժեշտ է, որ արգելանքից հանելու գրություն ավելացնելիս լինի դաշտ /ոչ պարտադիր լրացման/, որտեղ լրացնելով ձեռքով նախապես մուտք արված արգելանքի տակ դնելու որոշման բանալին, տվյալ գրության ստատուսը փոխի և սարքի արխիվացված: Ընդ որում, տվյալ դաշտը լրացնելուց հետո, հայտնվի ավելացնել կոճակ, որով հնարավոր լինի ևս մեկ հատ նման դաշտ ստեղծել, այդպես շարունակաբար: Բոլոր դաշտերում լրացված տվյալները պետք է համադրվեն նախապես մուտք արված արգելանքի տակ դնելու որոշման բանալիների հետ և համադրման դեպքում ստատուսները փոխի արխիվացված և համապատասխան կադաստրային գործերի սահմանափակումներ դաշտերից արխիվացված գրությունների հիման վրա կիրառված արգելանքները հանի:

2.25. Անհրաժեշտ է, որ Ե13 տեսակի գրությունները, որոնք արխիվացնում են Ե12 տեսակի գրությունը ամբողջությամբ կամ մասնակի, ավտոմատ PDF ֆորմատով կցվի այն կադաստրային գործի կամ գործերի փաստաթղթերում, որոնց վրա տվյալ Ե12 տեսակի գրությամբ կիրառվել է կալանք:

3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ՄՇԱԿՎԱԾ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

3.1. Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված ծրագրային ապահովման մշակողը Պատվիրատուի հետ ծրագրային ապահովման մշակման պայմանագիրը կնքելուց հետո մեկամսյա ժամկետում պետք է Պատվիրատուի հետ համաձայնեցնի սույն տեխնիկական բնութագրով նախատեսված լրացումների և փոփոխությունների տեխնոլոգիական լուծումները և մանրամասն բնութագրերը, արտադեմային լուծումները, ինչպես նաև սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների իրականացման, փորձարկման և հանձնման ժամկետները:

3.2. Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների արդյունքում մշակված ծրագրային ապահովման ընդլայնումները պետք է հանձնվեն Պատվիրատուին ըստ պատրաստվածության աստիճանի՝ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.3. Կատարողը չի կարող որևէ այլ կերպ փոփոխության ենթարկի էլեկտրոնային համակարգի ծրագրային ապահովումը, քան դա անհրաժեշտ է սույն տեխնիկական բնութագրով անհրաժեշտ լրացումների իրականացման համար:

3.4. Կատարողը պետք է ապահովի Պատվիրատուի կողմից տրամադրված փորձարկման ենթակառուցվածքում Կատարողի կողմից իրականացված յուրաքանչյուր ընդլայնման՝ որպես էլեկտրոնային համակարգի բաղկացուցիչ մասի փորձարկումը:

3.5. Կատարողը պետք է ապահովի սույն տեխնիկական բնութագրով նախատեսված էլեկտրոնային ծառայությունների ներդրման հետ կապված ցանցային ծրագրային կարգաբերումները:

Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	ավարտը
Պայմանագիր կնքելու օրից	25.12.2017թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7
h/h 900013220026
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328
Աշխատակազմի ղեկավար՝

Վ. Հասրաթյան
/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԲԵՍԹ ՍՈՖԹ» ՓԲԸ
Հասցեն՝ ք.Երևան, Չարենցի 1
Ամերիաբանկ ՓԲԸ
h/h 1570004845660100
ՀՎՀՀ 01568139

Տնօրեն՝ _____ Հ.Մարգարյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2
N ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ՇՀԾՁԲ-17/6/4 -2 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հազար ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում				
		մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	Ընդամենը Տարի
2	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	762.5	1525.0	2287.5	3050.0	**3050.0**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7
h/h 900013220026
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328
Տեխնիկական մասնագիտ ղեկավար՝
Վ. Հասրաթյան _____
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԲԵՍԹ ՍՈՖԹ» ՓԲԸ
Հասցեն՝ ք.Երևան, Չարենցի 1
Ամերիաբանկ ՓԲԸ
h/h 1570004845660100
ՀՎՀՀ 01568139
Տնօրեն՝ _____ Հ.Մարգարյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 3
N ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ՇՀԾՁԲ-17/6/4-2 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն